


## Խնդիրներ պատկերների պարագծերի և մակերեսների վերաբերյալ

- Ուղղանկյան պարագիծը հավասար է նրա լայնության և երկարության գումարի կրկնապատիկին:
- Ուղղանկյան մակերեսը հավասար է նրա երկարության և լայնության արտադրյալին:




Լայնություն

Երկարություն

- Քառակուսին այն ուղղանկյունն է, որի լայնությունը հավասար է երկարությանը:
- Քառակուսու բոլոր կողմերը հավասար են:
- Քառակուսու պարագիծը հավասար է կողմի քառապատիկին:
- Քառակուսու մակերեսը հաշվելու համար նրա կողմը բազմապատկում ենք իրենով:



**Եռանկյան պարագիծը հավասար է նրա 3 կողմերի երկարությունների գումարին:**



**Քառանկյան պարագիծը հավասար է նրա 4 կողմերի երկարությունների գումարին:**



**Մի քանի սովորողներ այսօրվա ձեր աշխատանքը սա է՝**

**Առաջադրանքներ**

1. Հաշվի՛ր 25սմ և 10սմ կողմերով ուղղանկյան պարագիծն ու մակերեսը:

2. Ուղղանկյան լայնությունը 84սմ է, իսկ երկարությունը 6 սմ-ով մեծ է լայնությունից: Գտնել ուղղանկյան պարագիծը և մակերեսը:

3. Գտի՛ր քառակուսու մակերեսը և պարագիծը՝ իմանալով, որ նրա կողմի երկարությունը 5 դմ է:
4. Քառակուսու պարագիծը 36 սմ է: Որքա՞ն է այդ քառակուսու մակերեսը:
5. Քառակուսու 3 կողմերի գումարը 36 սմ է: Որքա՞ն է այդ քառակուսու մակերեսը:
6. Մի ուղղանկյան լայնությունը 50սմ է, իսկ երկարությունը 60սմ է, իսկ մյուս ուղղանկյան լայնությունը 70սմ է, իսկ երկարությունը 80սմ է: Որքանո՞վ է մեծ ուղղանկյան մակերեսը մեծ փոքր ուղղանկյան մակերեսից:
7. Հաշվի՛ր 4դմ, 6դմ և 7դմ կողմերով եռանկյան պարագիծը:
8. Հաշվի՛ր 5սմ, 4սմ, 6սմ և 7սմ կողմերով քառանկյան պարագիծը:
9. Հաշվիր ուղղանկյան պարագիծը, եթե հայտնի է, որ նրա լայնության և երկարության գումարը 46 է:
10. Քառակուսու մակերեսը 36 քառակուսուսի մետր է: Գտի՛ր քառակուսու կողմը:

Միրելի սովորողներ, կատարեք չափումներ ու հաշվեք ձեր հյուրասենյակի հատակի մակերեսն ու պարագիծը: